



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

---

# Ս. ԾՆՈՒՆԴ

ՇԱՐԱԿԱՆ Ք

Ե Ի

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի ՊԷՏՍ ԵՐԳԵՑԻԿ ՍԱՆԿԱՆՑ

---

ՇԱՐԱԿԱՐԳԵՑ

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ

ՄԻՀՐԱՆ Գ. ՃԵՐՐԱՀԵԱՆ

---



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

1913

---

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

# Ա. ԾՆՈՒՆԴ

ՇԱՐԱԿԱՆՔ

ԵՒ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի ՊԷՏՍ ԵՐԳԵՑԻԿ ՍԱՆԿԱՆՑ



ՇԱՐԱԿԱՐԳԵՑ

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ

ՄԻՀՐԱՆ Գ. ՃԵՐՐԱՀԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

1912



Քհնյ. Օրհնեալ Տէր մեր, Հայր մեր որ յերկ. :  
 Եւ ապա, ծաշու երեք Ողորմեայք ամբողջա-  
 պէս ասասցեն :

Ձկնի. Մաղ. Հոգւոց հանգուցելոց :  
 Քհնյ. Հայր մեր. ՁՍաղմոսերգութիւն :  
 Եւ ապա Սաղմոս ձայնիւ ԳԼ. ԻԲ.

Իպ. Տէր հովուեսցէ զիս, և ինձ  
 ինչ ոչ պակասեսցի :

Ի վայրի դալարւոջ՝ անդ բնակեցոյց  
 զիս և առ ջուրս հանգստեան սնոյց  
 զիս :

Դարձոյց զանձն իմ առ իս, և ա-  
 ռաջնորդեսց ինձ ի ճանապարհս ար-  
 դարութեան վասն անուան իւրոյ :

Թէպէտ և գնացից ես ՚ի մէջ ըստ-  
 ուերաց մահու, ոչ երկեայց ՚ի չարէ,  
 զի դու Տէր ընդ իս ես :

Յուպ քո և գաւազան՝ նորա մխի-  
թարեցեն զիս :

Պատրաստ արարեր առաջի իմ զսե-  
ղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց :

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ  
քո որպէս անապակ արբեցոյց զիս :

Ողորմութիւն քո Տէր զհետ իմ  
եկեացէ զամենայն աւուրս կենաց ի-  
մոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ  
երկայն աւուրս :

Սրկ. Ալէլուիա. ալէլուիա. եւ ևս խաղաղու-  
թեան զՏէր աղաչեսցուք ընկալ կեցո և ողորմեա :  
Քհնյ. Օրհնութիւն և փառք Հօր :  
Դարձեալ Սաղմոս ձայնիւ Գլ. ՀԹ.

Դպ. Որ հովուեսդ Իսրայէլի՝ նայ-  
եաց, որ առաջնորդես որպէս խաչին  
Յովսեփու :

Որ նստիս ի քրովբէս՝ յայտնեաց  
առաջի Եփրեմի, Բենիամինի և Մա-  
նասէի :

Զարթո զգորութիւնս քո, և եկ  
ի կեցուցանել զմեզ :

Աստուած զօրութեանց դարձս ըզ-

մեզ, երեւեցո զերեսս քո ի մեզ, և  
կեցցուք :

Տէր Աստուած զօրութեանց, մին-  
չեւ յե՞րբ բարկանաս յաղօթս ծա-  
ռայից քոց :

Զամբեցեր մեզ հաց արտասուաց,  
և արբուցեր մեզ արտասուս չափով :

Արարեր զմեզ նախատինս դրաց-  
եաց մերոց, այսին կատականաց թըշ-  
նամեաց մերոց :

Աստուած զօրութեանց դարձս ըզ-  
մեզ, երեւեցո զերեսս քո ի մեզ և  
կեցցուք :

Այգի յԵգիպտոսէ փոխեցեր. հա-  
ներ զհեթանոսս՝ և զնոսս անկեցեր,  
և առաջնորդեցեր նմա :

Հաստատեցեր զարմատս նորա՝ և  
եղից զերկիր. ծածկեաց զլերինս հո-  
փանի նորա, և բարունակ նորա զմայրս  
Աստուծոյ :

Զգեաց զօրթ իւր մինչեւ ի ծով,  
մինչեւ ի գետս են շառաւիղք նորա :

Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա, և  
կթեն զնա անցաւորք ճանապարհի :

Ապականեաց զնա խող անտառի,  
և երէվայրի արածեցաւ ի նմա :

Աստուած զօրութեանց, դարձ  
հայեաց յերկնից և տես, այց արա  
այգւոյս այսմիկ, և դարման տար ամա՛  
զոր անկեաց աջ քո :

Ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօ-  
րացուցեր զնա ի քեզ. այրեցեալ ի  
հուր և աւերեալ, ի սաստէ քումմէ  
կորիցէ :

Եղիցի ձեռն քո ի վերայ առն, աջ  
քո ի վերայ որդւոյ մարդոյ, զոր զօ-  
րացուցեր զնա ի քեզ :

Ոչ եւս ի բացեայ եղիցուք մեք ի  
քէն : կեցուցես դու զմեզ, և զանուն  
քո Տէր կարգասցաւ ք :

Աստուած զօրութեանց, դարձո  
զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ և  
կեցցուք :

Սրկ. Ալեյուիա օրթի. Խաղաղութիւն ամենե-  
ցուն. Աւետարան. Եւ հովիւքն էին :

Եւ ապա դարձեալ Սաղմոս ձայնիւ Գլ. Բ.

Դպ. Կց. Տէր ասաց ցիս որդի իմ ես  
դու և ես այսօր ծնայ զքեզ :

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և  
ժողովուրդք խորհեցան ի սնուօխս :

Յանդիման եղեն թագաւորք երկ-  
րի, և իշխանք ժողովեցան ի միասին՝  
վասն Տեառն և վասն օծելոյ նորա :

Խզեսցո՛ւք զկապանս նոցա, և ըն-  
կեսցուք ի մէնջ զլուծ նոցա :

Բնակեալն յերկինս ծիծաղեսցի  
զնոքօք, և Տէր արհամարհեսցէ զնոսա :

Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բար-  
կու թեամբ իւրով, և սրտմտութեամբ  
իւրով խռովեցուցէ զնոսա :

Ես կացի թագաւոր ի նմանէ, ի  
վերայ լերին Սիօնի սրբոյ նորա՝ ի  
պատմել զհրամանս Տեառն :

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու,  
և ես այսօր ծնայ զքեզ :

Խնդրեա յինէն, և տաց քեզ զհե-  
թանոսս ի ժառանգութիւն, և իշխա-  
նութիւն քեզ ընդ ամենայն ծագս  
երկրի :

Հովուեսցես զնոսա դաւազանաւ երկաթեալ, և որպէս զանօթ բրտի փշրեսցես զնոսա :

Արդ թագաւորք՝ զայս ի միտ առէք, և խրատեցարուք ամենեքեան, ոյք դատէք զերկիր :

Ծառայեցէք Տեառն երկիրդիւ և ցնծացէք առաջի նորա դողութեամբ :

Ընկալարուք զխրատ նորա, զի մի՛ բարկասցի Տէր, և կորնչիցիք ի ճանապարհացն արդարութեան :

Ի ժամանակի՛ յորժամ բորբոքեսցի բարկութիւն նորա :

Երանի՛ ամենեցուն՝ ոյք յուսացեալ են ի Տէր :

Սրկ. Ալէլուիա. ալէլուիա. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցոք ընկալ կեցո և ողորմեա :  
Քննչ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Ապա դարձեալ Սաղմոս ձայնիւ Գլ. ՃԹ.

Իպ. կց. Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ :

Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եզից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց :

Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիօնէ, և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց :

Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան. ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ :

Երդուաւ Տէր և ոչ եւս զղձացի թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի, և Տէր ընդ աջմէ քումմէ :

Խորտակեսցէ յաւուր բարկութեան զթագաւորս, դատէ զհեթանոսս, և բազում առնէ զհարուածս, և խորտակեսցէ զգլուխս բազմաց յերկրի :

Զուղիսս ի ճանապարհի սրբուսցէ. վասն այսորիկ և բարձր արասցէ ըզգլուխս :

Սրկ. Ալէլուիա՝ օրթի. Խաղաղութիւն ամենե-  
ցուն. Աւետարան. Եւ Յիսուսի Գրիստոսի Ծնունդն:

Սրկ. Չկնի. Եւ եւս խաղաղութեան զՏէր ա-  
ղաչեսցուք ընկալ կեցո և ողորմեա:

Բհնյ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և  
Հոգւոյն Սրբոյ :

Խոնարհեցո. և Ապրեցո :

Եւ եթէ շաբաթ իցէ Լոյս զուարթ:

Մեսեդի. Տէր ասաց ցիս որդի իմ:

Քարոզ աղաչեսցուք :

Սուրբ Աստուած ըստ պատշաճի աւուրն:

Հմբ. Բձ. Անկանիմք առաջի քո Աստ-  
ուածածին. և աղաչեմք զանարատ  
զկոյսդ :

Բարեխօսեա վասն անձանց մերոց .  
և աղաչեա ըզմիածին Որդին:

Փրկել ըզմեզ ի փորձութենէ . և  
յամենայն վրտանգից մերոց :

Քարոզ. Վասն խաղաղութեան :

Բհնյ. Հայր գթած :

Ապա Գիրք Ծննդոց : Ի սկզբանէ արար Աս-  
տուած :

Չկնի երգեցիկ մանկունք ընթեռնուն կարգա-  
լընթերցուածսն և մինչ ընթեռնուն «Օրհնեցէք

ամենայն գործք Տեառն զՏէր, օրհնեցէք և բարձր  
արարէք զնա յաւիտեան» յայնժամ դպիրք քաղցր  
ձայնիւ եղանակեն և սան:

Օրհնեցէք գովեցէք և բարձր ա-  
րարէք ըզՆա յաւիտեան: (Երիցս)

Եւ բանան զվարագոյրն և սկսանի զՍուրբ  
Պատարագն :

ԺՎ. Աստուածածին անհարսնացեալ  
զբանն անսկիզբն յղացար, և զԱստ-  
ուածըն անիմանալի ծնար, զանպարա-  
զրելին ի գիրկս քո բարձեր, նմա ան-  
դադար բարեխօսեա վասն անձանց  
մերոց :

Փոխ. Մեծացուցէ անձն իմ ըզՏէր  
և ցնծացէ հոգի իմ Աստուծով.  
Փրկչաւ իմով: Փառք Հօր: Այժմ և  
միշտ :

Շար. Գձ. Չանձառելի լուսոյ մայր  
և ըզբնակարան անսկզբնակից որդ-  
ւոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Չանհաս տնօրէնութեան մայր և  
զանձնաւոր տաճար Աստուծոյ բանին.  
օրհնութեամբ մեծացուցանեմք :



Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :

Զբոլորից փրկութեան մայր . որ զանտանելին ի յարգանդի եբարձ. ըզնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեմք :

Սուրբ Աստուած , Սուրբ և Հօր , Սուրբ և անմահ . որ ծնար և յայտնեցար վասն մեր ողորմեա մեզ : (Երիցս)

Գիրք. Բանդի երեւեցաւ մեզ :

Եւ ապա Սաղմոս յեա գրքոյն :

Ալէլուիա ալէլուիա . Հոգին Սուրբ եկեացէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո :

Աւետարան :

Փառք քեզ Տէր Աստուած մեր :

Եւ ասն հաւատամք ի մի Աստուած :

Սրբասացութիւն

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից

ընդ միածին թագաւորին . Որք երգէին և ասէին սա է Որդին Աստուծոյ . ամենեքեան սասացուք ուրախ լերուք երկինք և յնծասցեն հիմունք աշխարհի . զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ . զի կեցուսցէ զանձինս մեր :

Զկնի Ս. Պատարագին նախատօնակ արա ասելով .

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ : Իւր սարօքն :

Զկնի Բարող . Ս. ՂԱստուածածինն :

Կեցո Տէր : Տէր ողորմեա . Տէր ողորմեա . Տէր ողորմեա :

Քհնյ. Ընկալ Տէր զաղաչանս մեր :



Կ Ա Ն Ո Ն

Ս. ԾՆՆԴԵԱՆ ~~ՀԱՍՏԱՆԱԿԱՆ~~ ԱՌԱՒՕՏԵԱՆ



Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն:

Տէր եթէ գշրթունա իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Տէր եթէ գշրթունա իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տէ՛ր զի բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վերայ իմ:

Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չի՛ք փրկութիւն սորա առ Աստուած իւր:

Այլ դու Տէր՝ օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ: Զայնիւ իմով ես առ Տէր կարգացի, և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ: Ես ննջեցի եւ ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է:

Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա. ոյք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս:

Արի՛ Տէր՝ և փրկեա՛ զիս Աստուած իմ. զի դու հարեր զամենեսեան, ոյք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց. և զատամունս մեղաւորաց փշրեսցես:

Տեառնդ է փրկութիւն. ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քոյ:

Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի սուէ կարգացի և գիշերի առաջի քոյ:

Մտցեն աղօթք իմ առաջի քոյ Տէր, խոնարհեսցի ունկն քո ի խրնորուածս իմ:

Զի լցաւ շարշարանօք զանձն իմ,

և կեանք իմ ի դժոխս մերձեցան, եւ  
համարեցայ ես ընդ այնոսիկ որք ի-  
ջանեն ի գուր :

Եղէ ես որպէս մարդ առանց օգ-  
նականի, և ի մեռեալս ազատ :

Որպէս զվիրաւորս, որք ննջեն ի  
գերեզմանս :

Զորս դու ո՛չ յիշեցեր, նոքա ի ձե-  
ռանէ քումմէ մերժեցան :

Եդին զիս ի գբի ներքնումն, ի խա-  
ւարի և ի ստուերս մահու :

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն  
քո, զամենայն զբօսանս քո ածեր ի  
վերայ իմ :

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ,  
և եդին զիս նշաւակ իւրեանց :

Մատնեցայ և ո՛չ ելանէի, աչք իմ  
տկարացան յաղքատութենէ :

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ,  
և համբարձի առ քեզ զձեռս իմ :

Միթէ մեռելոց առնիցե՞ս զսքան-  
չելիս քո, կամ բժիշկք յարուցեալ  
խոստովան առնիցին առ քեզ :

Միթէ պատմեսցէ՞ որ երբէք ի  
գերեզմանի զողորմութիւնս քո, կամ  
զճշմարտութիւնս քո ի կորստեան :

Միթէ ճանաչիցի՞ն ի խաւարի  
սքանչելիք քո, կամ արդարութիւն  
քո յերկիր մոռացեալ :

Ես առ քեզ Տէր աղաղակեցի,  
առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն  
առ քեզ :

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ,  
կամ դարձուցանես զերեսս քո յինէն :

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի  
մանկութենէ իմմէ. ի բարձրութենէ  
խոնարհեցայ և ափշեցայ :

Յիս հաստատեցաւ բարկութիւն  
քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս :

Երջեցան զինեւ որպէս ջուր, զօր  
ամենայն պաշարեցին զիս ի միասին :

Հեռի արարեր յինէն զբարեկամս  
իմ եւ զծանօթս իմ, վասն թշուա-  
ռութեան իմոյ :

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, եւ ամե-  
նայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա :

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, եւ մի՛  
մոռանար զամենայն տուրս նորա ։

Ո քաւէ զմեզս քո, բժշկէ զամե-  
նայն հիւանդութիւնս քո ։

Ո փրկէ յապականութենէ զկեանս  
քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և  
գթութեամբ ։

Ո ընու ի բարութենէ զցանկու-  
թիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ  
մանկութիւն քո ։

Առնէ ողորմութիւնս Տէր, և իրա-  
ւունս ամենայն զրկելոց ։

Եցոյց Տէր զճանապարհս իւր Մով-  
սէսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր ։

Գթած ողորմած է Տէր, երկայնա-  
միտ և բազումողորմ ։

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր, և  
ո՛չ յաւիտեան պահէ ոխս ։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ  
Տէր, և ո՛չ ըստ անօրէնութեան մե-  
րում հատոյց մեզ ։

Այլ որպէս բարձր են երկինք  
յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զո-

ղորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց  
իւրոց ։

Որչափ հեռի են արեւելք յարեւ-  
մըտից, այնչափ հեռի արար ի մէնջ  
զանօրէնութիւնս մեր ։

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց  
իւրոց, այնպէս գթասցի Տէր յեր-  
կիւղածս իւր ։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր,  
և յիշեաց թէ հող եմք ։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք  
իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս  
ծաղկի ։

Շնչէ ի նմա հողմ, եւ ո՛չ է, եւ  
ո՛չ եւս երեւի տեղի նորա ։

Բայց ողորմութիւն Տեառն մնայ  
յաւիտեանս յաւիտենից ի վերայ եր-  
կիւղածաց իւրոց. և արդարութիւն  
նորա յորդւոց մինչև յորդիս ։

Ոյք պահեն զուխտս նորա, յիշեն  
զպատուիրանս նորա՝ և առնեն զնա ։

Տէր յերկինս պատրաստեաց զա-  
թոռ իւր. արքայութիւն նորա ամե-  
նեցուն տիրէ ։

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա՝ հզօրք զօրութեամբ. ոյք առնէք զբան նորա ի լսել ձայնի պատգամաց նորա:

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարողք կամաց նորա:

Օրհնեցէ՛ք զՏէր ամենայն գործք նորա. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա՛ անձն իմ զՏէր:

Տէր լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր խընդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով:

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից:

Չանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ եւ համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպէս երկիր ծորաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն ի գուբ:

Լսելի՛ արա ինձ առաւօտու զորմութիւնս քո. զի ես ի քեզ Տէր յուսացայ:

Յո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստուած իմ:

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ  
ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո Տէր՝ կեցուցես  
զիս, արդարութեամբ քով հանցես  
ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա՛  
զթշնամիս իմ. և կորո՛ զամենայն նե-  
ղիչս անձին իմոյ, զի ես ծառայ  
քո եմ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս  
յաւիտենից. ամէն։



Յիշեսցուք ի գիշերի զանուն քո  
Տէր։

Բրդխեսցեն սիրտք մեր զբան բարի.  
և լեզուք մեր պատմեսցեն զգործս  
երկնաւոր թագաւորիդ։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստո-  
վանեսցուք զքեզ Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ Տէր.  
ի գաւիթըս քո ի մէջ նոր Երուսա-  
ղեմի։

Ի գիշերի համբարձցուք ըզձեռս  
մեր սրբութեամբ առ քեզ Տէր։

Ի ձայն գոհութեան ամենայն հո-  
գիք օրհնեցէք ըզՏէր։

Վ. Զարթիք փառք իմ, զարթիք.  
և ես զարթեայց առաւօտուց. ալե-  
լուիա։

Զարթիք ընդ զըւարթունս, ման-  
կունք վերինըն Սիօնի. ալէ։

Զարթիք որդիք լուսոյ, ի յօրհնու-  
թիւն հօրն լուսոյ. ալէ։

Զարթիք փրկեալք արեամբ. եւ սուք զփառս փրկողին. ալէ:

Զարթիք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէ:

Զարթիք հարսունք հոգևով սպասեալք գալոյ սուրբ փեսային. ալէ:

Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն. ալէ:

Զարթիք պատրաստեցէք իւր լապտերաց զջերմ արասուս. ալէ:

Զարթիք եւ մի նընջէք, նըման յիմար կուսից նիրհէք. ալէ:

Զարթիք երկիրպագցուք և արտասուօք զսոս ասացուք. ալէ:

Փ. Զարթիր ընդէ՞ր նընջես. Տէր, մի մերժեր ըզմեզ իսպառ:

Արի Տէր օգնես մեզ. տացուք անուանըդ քում ըզփառս:

Այժմ և յաւէտ. Հօր և Որդւոյ, և սուրբ Հօգւոյն. ամէն:

Փ. Զարթուցեալքս ի զբաղըմանէ գիշերային հանգըստենէ:

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր

մըխիթարութիւն և ի սփոփանս եկեղեցւոյ:

Ահիւ եւ զողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք ըզյանցանս:

Եւ զըտցուք ի Քրիստոսէ զքաւութիւն և զմեծ զողորմութիւն:

կց. Անբաժանելի եւ համագոյ երրորդութեանդ. համաձայնեալք ընդ զօրս երկընից. փառս մատուցանեմք:

Փառքք քեզ: Որ յանարուեսս յաթոռ բարձրացեալ հանգչիս. սուրբ Աստուած հրգօր և սքանչելագործ:

Փառքք քեզ: Որ յանէից գոյացուցեր զամենայն արարածս. սուրբ Աստուած անձառ Հօր անեղ Որդի:

Փառքք քեզ: Որ տեսչութեամբ ինամես զամենայն արարածս. սուրբ Աստուած բրղիսումն անըսպառ աղբեր:

Տէր: Ժողովրդապետք եկեղեցւոյ ի քէն հայցեն ասելով. հովիւ բարի.

ողորմեա բանաւոր հօտի: Ամէն. ալե-  
լուիա. ալէլուիա. ալէլուիա: Ամէն. ա-  
լէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Ք Ա Ր Ո Չ

Զարթուցեալքս ամենեքեան ի  
հանգստենէ քրնոյ, զոր շնորհեաց  
մեզ մարդասէրն Աստուած ի մխիթա-  
րութիւն և ի սփոփանս տկարութեան  
մերում: Եւ եկեալքս միաբան հոգևոր  
երգով ի փառաբանութիւն և ի պա-  
տիւ ամենասուրբ անուան տեառն  
մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:  
Ահիւ և դողութեամբ կացցուք յա-  
ղօթս առաջի նորա: Եւ գոհացարո՛ւք  
զնմանէ ի գիշերային ժամուս յայս-  
միկ, փան իրաւանց և արդարութեան  
նորա: Որ ընտրեաց զմեզ ողորմու-  
թեամբն իւրով. և շնորհեաց մեզ  
բերել ըզնմանութիւն երկնային հրեշ-

տակացն ի փառաբանիչս Տեառն Աս-  
տուծոյ ամենեցուն և մեզ լինիլ: Եւ  
մեք այսուհետեւ սրբելով զանձինս  
մեր ի խղճէ և ի չար գործոց, համ-  
բարձցուք զձեռս մեր ի սրբութիւն  
առանց բարկութեան և երկմրտու-  
թեան: Հաւատով խնդրեսցուք ի  
նմանէ զքաւութիւն և զթողութիւն  
յանցանաց մերոց, խոստովան լինելով  
զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին  
Աստուծոյ, Որպէս զի ընդունելով զպա-  
ղատանս մեր աղօթիւք և բարեխօ-  
սութեամբ ամենայն սրբոց, շնորհեսցէ  
մեզ մարդասէրն Աստուած կեալ ա-  
ռաքինութեամբ՝ և անարատ վարուք  
ըստ կամաց նորա յայսմ աշխարհիս,  
և արժանաւոր լինելով յաւիտենա-  
կան և երկնային խորանացն: Զոր խոս-  
տացաւ սիրելեաց իւրոց՝ ճշմարիտն  
Աստուած՝ Յիսուս Քրիստոս. Տէր մեր  
կեցո և ողորմեա: Կեցո տէր:

Զմնացուած գիշերիս խաղաղու-  
թեամբ անցուցանել՝ հաւատով ի



Տեառնէ խնդրեսցուք: Շնորհեա Տէր:

Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց, ի տեառնէ խնդրեսցուք: Շնորհեա Տէր:

Զքառութիւն և զթողութիւն յանցանաց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք: Շնորհեա Տէր:

Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց, ի Տեառնէ խնդրէ: Շնորհեա Տէր:

Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ՝ զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Զանձինս մեր և զմիմեանքս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա:



Նորին Տեառն Ներսիսի Հայոց Կարողիկոսի՝ երգ աղօթական ՚ի դիմս Սրբոյ Երրորդութեան, նաեւ իւրաքանչիւրոյ դիմի Երրորդութեան առանձնակի:

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա՛: Բըղխումն ի հօրէ, բըղխեա՛ ի հօգւոյս, բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գըտող զիս արա՛: Դուռն ողորմութեան, դաւանողիս բա՛ց, դասեցո՛ վերնոցն:

Երբեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ ողորմեա՛: Զարթի՛ր տէր յօգնել, զարթո՛՛ր ըզթըմբեալս, զուարթնոց նմանիլ:

Էդ հայր անըսկիզբն, էակից որդի, է միշտ սուրբ հօգի: Ընկա՛լ զիս գըթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տըլող, թո՛ղ ինձ ըզյանցանս: Ժողովող բարեաց, ժողովեա՛ եւ զիս, ժողովս անդրանկաց:

Ի քէն տէր հայցեմ. ի մարդասիրէդ. ինձ բրժըչկութիւն: Լէ՛ր կեանք մեռելոյս. լոյս խաւարելոյս. լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող. խաւարիս շը նորհեա՛. խորհուրդ լուսաւոր: Ծը նունդ հօր ծոցոյ. ծածկելոյս ստուերաւ. ծագեա՛ լոյս փառաց:

Կենարար փրկիչ. կեցո՛ ըզմեռեալս. կանգնեա՛ զգրլորեալս: Հաստեա՛ հաւատով. հաստատեա՛ յուսով. հիմնեցո՛ սիրով:

Չայնիւս աղաչեմ. ձեռօքս պաղատիմ. ձիր բարեաց շնորհեա՛: Ղամբարամբ լուսոյ. դեկավար ճարտար. զօղեալս ամբացո՛:

Ճառագայթ փառաց. ճանապարհ ինձ ցոյց. ձեպել ի յերկինս: Միածինըդ հօր. մո՛յժ զիս յառագաստ. մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք. յահագին աւուրն. յիչեա՛ զիս Քրիստոս: Նորոգող հնութեանց. նորոգեա՛ և զիս. նորոգ զարդարեա՛:

Շնորհատու բարեաց. շնորհեա՛ զքաւութիւն. շնորհեա՛ զթողութիւն: Ուրախացո՛ Տէր. ոգւոյս փրկութեամբ. ոյր վասն եմ ի սուգ:

Չար մըշակողին. չար սերմանց նորին. չորացո՛ զպտուղն: Պարգեւիչ բարեաց. պարգեւեա՛ իմոց. պարտեացս թողութիւն:

Չուր շնորհեա՛ աչացս. Չերմ հեղուլ զարտօսըր. Չընջել ըզյանցանս: Ռեաինըդ քաղցու. ուամ հոգւոյս արբո՛. ուս՛ց ցոյց ինձ լուսոյ:

Սէր անունն Յիսուս. սիրով քով ճըմլեա՛. սիրտ իմ քարեղէն: Վասըն գըթութեան. վասն ողորմութեան. վերըստին կեցո՛:

Տենչալոյդ տեսեամբ. տուր ինձ յագենալ. Տէր Յիսուս Քրիստոս. Բաբունդ երկնաւոր. բոսեա՛ զաշակերտս. բամից երկնայնոց:

Յօղ արեան քոյ Տէր. ցօղեա՛ ի հոգիս. ցընծացէ անձն իմ: Իլեծեալըս

մեղօք լիւծեալ աղաչեմ: լիւսել ինձ  
բարիս:

Փրկիչ բողոքից. փութա՛ զիս փրկ-  
կել. փորձութեանց մեղաց: Քաւիչ  
յանցանաց. քաւեա՛ զօրհնաբանս. քեզ  
երգել ըզփառս:

Աստուածածնին բարեխօսութեամբ  
բըն, սրբուհւոյ յիշեա՛ Տէր և ողորմեա:



Կանոնագլուխ. ըստ աւուր ձայնի:

Ձկնի Հանգստեան Շարական:

Սաղմոս. ըստ աւուր ձայնի:

Աւետարան:

Երգ Աստուած անեղ. ըստ աւուր ձայնի. զկնի

Կուսածին մարդացեալ Աստուած իմ  
Յիսուս. յայնքմ աւուր ահեղ ատենին՝ ըզ-  
գինս արեան քո մի դատապարտեր. օգնեա  
և ինձ Քրիստոս այսօր յառաջին ճանապար-  
հին և ի միւսանգամ գալըստեանըն քո օգ-  
նեա ինձ:

Մաղթանք. Հոգւոցն հանգուցելոց:

Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր որ յերկինս ես:  
Եւ եւս խաղաղութեան:

Օրհնութիւն եւ փառք հօր:

Օրհնեսցուք ըզՏէր. զի փառօք է  
փառաւորեալ:

Իկ. Խորհուրդ մեծ և սքանչելի,  
որ յս՛յսմ աւուր յայտնեցա՛ւ. հո-  
վիւքն երգեն ընդ հրեշտակս տան  
աւետիս աշխարհի:

Մնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ  
քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք  
զի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի ՚ի  
խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով  
ի հօրէ ի սուրբ յայրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ  
մեծապայծառ աւետեօք. և արարածք  
ամենայն զգեցան հանդերձ փրկու-  
թեան:

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիս-  
տոս Արդին Աստուծոյ. և հրեղինաց

բազմութիւնքն յերկնից յերկիր վայր  
իջեալ:

Այսօր հովուացրն տեսեալ զար-  
դարութեան արեգակն. և ընդ հրեշ-  
տակս երգէին փառք ի բարձունս Աս-  
տուծոյ:

Ի հօրէ ծագեցար լուսաւորել զա-  
րարածս. արդարութեան արեգակրն  
Տէր փառքք քեզ:

Ծընար ի յայրին ընծայեցաւ Բեթ-  
ղէհէմ. արդարութեան արեգակրն  
տէր փառքք քեզ:

Քաղուածք Օրհնութեան

Այսօր բանն ի հօրէ, անմեկնելի  
և անձառելի խորհրդով, ի ձեռն  
կուսական որովայնի տնօրինաբար  
յերկրի երեւեալ: Մանուկ անժա-  
մանակ ի հօրէ անսերմն ի կուսէ, ի  
գիրկըս մօր գրգուեցաւ սյսօր արա-  
րիչն երկնի և երկրի: Որ մաքրեացն  
ըզյորդանան և լուաց ըզմեզս աշ-  
խարհի. զոր օրհնեն անդադար ա-

րարածք ամենայն զէակիցըն հօր և  
հոգւոյն:

Աստուածածին սուրբ կոյս ա-  
նասրական տաճար, անպարագիծ էին  
բոլորին բնութեանց լայնածաւալ տե-  
ղի. այսօր ընդ բերկրական զուարթ-  
նոյն կրեցեր աւետեաց ըզտէրըն  
տէրանց ի քեզ. առ որ մաղթեմք  
բարեխօսել վասըն մեր անլուելի ձայ-  
նիւ: Յիմանալի վտակաց տանն Աս-  
տուծոյ հոսմանց, վիճակեալ տեսու-  
նողացրն ձայնի արբամաք ըզմայլե-  
ցար. այսօր զանթառամըն ծաղկեցար  
ըզծաղիկ ի ժամու տալով զպտուղն.  
առ որ: Այսօր ի քեզ լցեալ ամով-  
սածնին բարբառ. որ ի փրկութիւն  
հասարակաց տուեալ նշան բնութեան  
ազգի մարդկան. ահա կոյս յղացի և  
ծընցի որդի զընդ մեզ յայտնեալն  
Աստուած. առ:

Ըզքեզ Աստուածածին աղբիւր  
անըսպառ լուսոյն, որ լուսաւորէ ըզ-  
հաւատացեալս, միաբանական ձայ-

նիւ երգով մեծացուցանեմք : Դու պարծանք կուսութեան մարդկան, դու ուրախութիւն հրեշտակաց, դու բարձող անիծիցն, վասն որոյ ըզքեզ Աստուածածին մեծացուցա : Դու ճշմարիտ արեւելք արեգականըն արդարութեան, յորմէ ծագեաց փրկութիւն տիեզերաց, միաբանական ձայնիւ երգով մեծա :

Աստուածածին և սրբբուհի, որ ըզբանն աստուած անսերմն յղութեամբ յարգանդի կրեցեր. անդադար երգով մեծացուցանեմք : ըզքեզ մայր կուսութեան և յղութեան լուսոյ, և առագաստ անձառելոյ բնակողին, ի քեզ փեսայացեալ բանին. անդադար երգով մեծա : Քեւ լուծան կնիք դատապարտութեան և, քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ, վասն որոյ ըզքեզ Աստուածածին և կոյս, անդադար երգով մեծացուցա :

Միայնոյ քեզ ի կանայս կոյս յետ ծնընդեան երգեմք զօրհնութիւն, զի

լոյս ի լուսոյ քեւ յայտնեցաւ աշխարհի, և զիախամօրն եբարձ զանէծս անձառ ծընընդեամբն ի քէն : Քեզ միայնոյ մարմնացելոյդ ի սուրբ կուսէն, օրհնութիւն ի բարձունըս վերերգեմք ասելով, փառք քեզ Քրիստոս որ եկիր կամաւ հօր կեցուցանել ըզմեզ : Խընդա Մարիամ, որ եղեր մայր Քրիստոսի, և ազաչեա զառ ի քէն զմարմնացեալ բանն Աստուած, զի փրկեսցէ զմեզ ի փորձութենէ :

Եւ ևս խաղաղութեան զոէր աղաչեոցաք .

Օրհնութիւն և փառք հօր :

Հոգիք հրեղինացն այսօր տօնեն ընդ մեզ ըզգալուստ հոգւոյն Աստուծոյ : Տեսանողն յառաջ նշանակէր զառատաբուղիս վրտակ իմաստից ի մեզ հեղեալ ի հոգւոյն : Վէմըն հաւատոյ զմայլեալ անմահական բաժակաւն այսօր բաշխէր ծարաւեաց : Գետոցս այս գնացիւք ցնծայ քաւ



հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ա.ձ. Գ.ձ.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն ի գիշերի և ի տուընջեան և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան Տեառն՝ զՏէր աղաչեսցուք:

Վասն շանկանելոյ մեզ ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղաչեսցուք:

Վասն անբիժ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի. ըզՏէր աղաչեսցուք:

Վասն առաջնորդելոյ մեզ ի նաւահանգիստն կենաց անվախճանից. զՏէր աղաչ:

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեանն. զՏէր աղաչես:

Վասն հոգւոցն: Եւ ևս միաբան: Զանձինս: Ողորմեաց մեզ:

Ակ. Գկ.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան. զՏէր աղաչեսցուք:

Վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին. զՏէր աղաչես:

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս. զՏէր աղաչես:

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աշոյն իւրոյ. զՏէր աղաչ:

Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք. զՏէր աղաչ:

Վասն հոգւոցն: Եւ ևս միաբան: Զանձինս: Ողորմեաց մեզ:



Բձ. Դձ,

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք :

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն ի բարեբար Տեառնէ մերմէ . զՏէր աղաչ :

Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի . զՏէր աղ :

Վասն ամենայն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց . զՏէր աղաչեսցուք :

Վասն որք ի լեռինս, յայրս և ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր . զՏէր աղաչ :

Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց . զՏէր աղաչես :

Վասն հոգւոցն : Եւ ևս միաբան : Զանձինս : Ողորմեաց մեզ :

Քհնյ. Աղօթք .

Ա Լ Է Լ Ո Ի Ք

Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Աձ. Տէ՛ր հովուեսցէ զիս . և ինձ ինչ ոչ պակասեսցի :

Ի վայրի՛ դալարւոյ՛ անդ բնակեցոյց զիս , և առ ջուրս հանգստեան սրնոյց զիս :

Փ. Ալէ : Իջցէ՛ որպէս զանձրեւ ի վերայ գեղման . որպէս ցօղ զի ցօղէ յերկիր :

Ծագեսցի՛ յաւուրս նորա արդարութիւն . բազում խաղաղութիւն մինչեւ կատարեսցի լուսին :

Փա՛ռք եւ երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . Ա՛յժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :

Դա՛սք հրեշտակաց օրհնեն զՔեզ Քրիստոս , ալէլուիա . Մարդկա՛ն ազգ սաղմոսեն քեզ :

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Ակ. Լ՛ո՛ւր դուստր և տես . խոնարհեցո զունկն քո . մոռա զժողովուրդ քո և գտուն Հօր քոյ , զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ :



Սա՛ ինքն է Տէր քո՛ երկիրպագ-  
ցես սմա . և դուստր ծուրայ երկիր-  
պագցէ սմա . և պատարագօք զերեսս  
սորա պաշտեսցեն մեծամեծք ի ժո-  
ղովրդոց :

Վ. Ալէ : Նա՛ կարդասցէ առ իս ,  
Հայր իմ ես դու . Աստուած ընդու-  
նող փրկութեան իմոյ :

Ե՛ս անդրանիկ արարից զնա , եւ  
բարձր քան զամենայն թագաւորս  
երկրի :

Փառք և երկրպա : Այժմ և միշտ և :  
Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :



Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Բձ . Իջցէ՛ որպէս անձրեւ ի վերայ  
գեղման . որպէս ցօղ զի ցօղէ յերկիր :

Ծագեսցի՛ յաւուրս նորա արդա-  
րութիւն . բազում խաղաղութիւն  
մինչեւ կատարեսցի լուսին :

Վ. Ալէ : Եցո՛յց Տէր զփրկութիւն

իւր , առաջի ազգաց յայտնեաց զար-  
դարութիւն իւր :

Յիշեանց ողորմութեամբ իւրով  
զՅակոբ . ճշմարտութեամբ իւրով  
զտունն Իսրայէլի . եւ տեսին ամենայն  
ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ  
մերոյ :

Փա՛ռք եւ երկր : Այժմ եւ միշտ :  
Ալէլուիա :



Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա .

Բկ . Նա՛ կարդասցէ առ իս Հայր  
իմ ես դու .

Աստուած ընդունող փրկութեան  
իմոյ :

Ե՛ս անդրանիկ արարից զնա . եւ  
բարձր քան զամենայն թագաւորս  
երկրի :

Վ. Ալէ : Ընդ քե՛զ է սկիզբն յա-  
ւուր զօրութեան . ի վայելչութիւն  
սրբոց քոց յարգանդէ յառաջ քան  
զարուսեակ ծնայ զքեզ :

Երգուա՛ւ Տէր և ոչ եւս զղջասցի.  
Թէ դու ես Քաջանայ յաւիտեան  
ըստ կարգին Մեղքիսեղեկի, և Տէր  
ընդ աջմէ քուճմէ:

Փառք և եր. Այժմ և միշտ:  
Ալէլուիա:



Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Գձ. Եցո՛յց Տէր զփրկութիւն իւր,  
առաջի ազգաց յայտնեաց զարդա-  
րութիւն իւր:

Յիշեա՛ց ողորմութեամբ իւրով  
զՅակոբ, ճշմարտութեամբ իւրով  
զտունն Իսրայէլի, եւ տեսին ամենայն  
ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ  
մերոյ:

Վ. Ալէ: Յիշեա Տէր զԴաւիթ, եւ  
զամենայն հեզութիւն նորա:

Որպէ՛ս երգուաւ Տեառն, և ուխտս  
եղ Աստուծոյ Յակոբայ:

Փառք և երկրպագ. Այժմ եւ  
միշտ: Ալէ:



Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Գկ. Ընդ քե՛զ է սկիզբն աւուր զօ-  
րութեան. ի վայելչութիւն սրբոց քոց  
յարգանդէ յառաջ քան զարուսեակ  
ծնայ զքեզ:

Երգուա՛ւ Տէր և ոչ ևս զղջասցի.  
Թէ դու ես Քաջանայ յաւիտեան ըստ  
կարգին Մեղքիսեղեկի. եւ Տէր ընդ  
աջմէ քուճմէ:

Վ. Ալէ: Տէ՛ր ասաց ցիս որդի իմ  
ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:

Խնդրեա՛ յինէն, և տաց քեզ զՀե-  
թանոսս ի ժառանգութիւն. և իշխա-  
նութիւն քեզ ընդ ամենայն ծագս  
երկրի:

Փառք եւ երկրպագ. Այժմ և միշտ  
եւ: Ալէ:



Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

Գձ. Յիշեա՛ Տէր զԴաւիթ, և զա-  
մենայն հեզութիւն նորա:

Որպէ՛ս երգուաւ Տեառն, և ուխտս  
եղ Աստուծոյ Յակոբայ :

Վ. Ալէ : Տէ՛ր հովուեսցէ զիս . եւ  
ինձ ինչ ոչ պակասեսցի :

Ի վայրի՛ դալարւոջ անդ բնակե-  
ցոյց զիս . և առ ջուրս հանգստեան  
անոյց զիս :

Փառք եւ երկրպա : Այժմ՛ և միշտ  
եւ : Ալէ :

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա .

Դկ. Տէր ասաց ցիս որդի իմ՛ ես դու .  
և ես այսօր ծնայ զքեզ :

Խնդրեա՛ յինէն , և տաց քեզ զհե-  
թանոսս ի ժառանգութիւն . և իշխա-  
նութիւն քեզ ընդ ամենայն ծագս  
երկրի :

Վ. Ալէ : Լճ՛ւր դուստր և տես,  
խոնարհեցո՛՛ զունկն քո . մոռա զժո-  
ղովուրդ քո և զտուն Հօր քոյ , զի  
ցանկացաւ թագաւոր զեղոյ քոյ :

Սա՛ ինքն է Տէր քո՛ երկիրպագցես  
ամս . եւ դուստր ծուրայ երկիրպագցէ  
ամս . եւ պատարագօք զերեսս սորա  
պաշտեսցեն մեծամեծք ի ժողովրդոց :

Փառք և երկրպա : Այժմ՛ և միշտ  
և : Ալէ :

Քննյ. Օրհնեալ Տէր մեր . լցաք առաւօտու :

Փոխ. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն  
մերոց . Օրհնեալ փառաւորեալ անուն քո  
յաւիտեան :

Հրց. Գձ. Անըսկիզբն էակից բանրդ  
հօր . որ էիր յառաջ քան զյաւիա-  
եանս . և եկիր ի փրկութիւն ըստեղ-  
ծուածոց քոց . ըզքեզ օրհնեմք Աս-  
տուած հարցրն մերոց : Ծընար ի կու-  
սէ անճառ միութիւն . անբաժանելի  
և միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայ-  
րական ծոցոյ . զքեզ օրհնեմք : Յըն-  
ծութեամբ տօնեսցուք ըզձընունդ քո  
սուրբ , որ յայտնեցար մեզ լոյս ի

լուսոյ . և լուսով քով լըցեր զտիե-  
զերս . զքեզ օրհն :

Գ. Գործըք տեառն ըզտէր օրհնեցէք,  
և բարձր արարէք ըզնա յաւիտեան :

Երկինք զտէր օրհնեցէք և բարձր  
արարէք զնա յաւիտեան :

Փառք Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ :

Ըզծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք .  
և բարձր արարէք ըզնա յաւիտեան :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-  
տենից ամէն :

Ձանձառելի զծրնունդ փրկչին գու-  
վեցէք , և առաւել բարձր սրարէք  
ըզնա յաւիտեան :

Մեծ. Ուրախ լեր աստուածածին ,  
յոյս և փրկութեան մայր , զքեզ ըն-  
դունող լուսոյ մեծացուցանեմք : Ըզ-  
քեզ լուսոյ մայր և կոյս , զքեզ գան-  
ձրդ կենաց՝ աստուածային ձայնիւ  
ցնծութեամբ մեծացու : Մայր սուրբ  
անարատ լուսոյն . հրեշտակային օրհ-  
նութեամբ պատուեալ զքեզ մեծաց :

«Եթէ ի կիրակէի հանդիպի Արի ասա . և զկնի  
Իւղարերից Աւետարանին» :

Հոյւք հոգեղէնք ընդ հովիւսն քա-  
րողէին ի յանբանից մըսուր զբանըն  
բազմեալ և մոգքն աստեղբըն գու-  
շակեալ մատուցին զընծայսն խոր-  
հըրդոյ :

Ողբ. Ամենիմաստ ամենից հայր  
բազմագեղ , խնամող ստեղծող և տէր  
բոլորից . անեղ և էիցս էակ , զոր  
միշտ օրհնեն դասք անմարմնականացն  
յաւէժաբար հնչմամբ : Որ կերպարան  
և կնիք հօր առեալ վասըն մեր , ծա-  
ռայի կերպ ի կուսէն . որ էն ի յաթոռ  
փառաց . անտես վերնոցն , ի յայրին  
իջեւանի և ի մըսուր անբանից բազմ-  
եալ : Ձի կուսէն մարմնացեալ բանն ,  
եկայք ժողովուրդք ընդ հովիւսըն  
բարեբանեսցուք . և ընդ մոգուցն  
երկրրպագեսցուք . ընդ երկնային

զօրսն երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ :

Տէր. Ճառագայթ և կերպարան է ութեան Հօր բանդ Աստուած. ըզքեզ բարեբանեմք ասելով. փառք ի բարձունս Աստուծոյ : Որ միացար ի մարմնի անձառապէս ճրչմարիտդ Աստուած. զքեզ բարեբանեմք : Որ զանիծիցրն բարձեր ըզդատապարտութիւն Քրիստոս Աստուած. զքեզ բարեբանեմք :

Օրդի, Աւետարան՝ եւ Հովիւքն էին :

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն : Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր : Օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ : Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիրպագանեմք քեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէ՛ր զքէն՝ փասն մեծի փառաց քոց : Տէր թագաւոր,

սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ : Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ Որդի : Տէր Աստուած գառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմերս ի Կուսէն : Ողորմեցար, բարձեր զմեզս աշխարհի, և արդ ընկալ զաղաչանս մեր : Սուրբդ՝ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ : Զի դու միայն սուրբ դու միայն, բարձեալ ես դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս : Տէր և Հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ Հօր. Ամէն :

Աւետարան՝ եւ եղև իբրև

Եւ յամենայն ժամ՝ օրհնեմք զքեզ Տէր և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից : Արժանի արա Տէր զօրս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահեալ մեզ. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն. Օրհնեալ Տէր ուսո՛ր ինձ զար-

դարութիւնս քո : (երիցս կրկնեա) Տէր  
 ապաւէն եղեր մեր յազգէ յազգ : Ես  
 աղաչեմ : Տէ՛ր, ողորմեա ինձ եւ բը-  
 ժըշկեա՛ զանձն իմ . ես մեղայ քեզ :  
 Յոյց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս քո,  
 և զփրկութիւնս քո սուր մեզ : Տէ՛ր,  
 ողորմութիւն քո յաւիտեան . զգործս  
 ձեռաց քոց մի՛ անտես առներ : Տէ՛ր  
 իմ, զքեզ սպաւէն ինձ արարի . ուսո՛  
 ինձ առնել զկամս քո, զի դու ես  
 Աստուած իմ : Ի քէն է Տէ՛ր, աղբիւր  
 կենդանութեան, և լուսով երեսաց  
 քոց տեսանեմք զլոյս : Ծագեա՛ զո-  
 ղորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ .  
 Տէ՛ր :

Մաղթանք . Փառք պատիւ ,

Երգ. Առա. Արեգակն արդարութեան  
 այսօր յայտնեցար ազգի մարդկան .  
 մարդ եղեալ սրբեցեր ըզՂուրս , վե-  
 րածնեալ զմեզ մկրտութեամբն սրբ-  
 քոյ հոգւոյն : Ի վայելչութիւն փառաց  
 սրբութեան քոյ ի յարգանդէ յառաջ

քան զարուսեակ ծնայ ըզքեզ , մարդ  
 եղեալ սրբեցեր ըզՂուրս . վերածնեալ  
 զմեզ մկրտութեամբն սրբքոյ հոգ-  
 ւոյն :

Բրգ. Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ  
 գԱստուածն ամենայն յաւիտեանց յորո-  
 վայնի քում կրեցեր, եւ ցնծութիւն աշ-  
 խարհի ծնար զբանն Աստուած, աղաչեմք :

Մայր սուրբ բարեխօսեա :

Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմ-  
 նացեալն Աստուած, որ խոնարհեցաւ ի հայ-  
 րական ծոցոյ, էառ մարմին ըստ մարդկա-  
 յին բնութեանս . առնել խաղաղութիւն յեր-  
 կինս և յերկրի . աղաչեմք :

Մայր սուրբ բարեխօսեա :

Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմ-  
 նացեալն Աստուած՝ ներել մեզ, անտես առ-  
 նել զյանցանս մեր և տա՛լ օգնականութիւն  
 ընդդիմակաց լինել հակառակամարտիցն ի  
 պատերազմի . աղաչեմք :

Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմ-  
 նացեալն Աստուած՝ զի լուսցին պատե-  
 րազմունք, զաղարեսցին յարձակմունք

Թշնամեաց , տնկեսցին սէր եւ արդարութիւն ի յերկրի . աղաչեմք :

Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած , աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն արբերաց . զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց , առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց . աղաչեմք :

Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած , զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ , շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից , պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ զալրստեան իւրոյ . աղաչեմք :

Աղաչեա վասն մեր Սրբունի զմիածին քո զորդին եւ վասն հոգւոցն հանգուցելոց , ընդունիլ յարքայութիւնն երկնից եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն . աղաչեմք :

Յիշեա՛ Տէր և ողորմեա :

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ և զգործըս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք :


Տուր մեզ Տէր Աստուած :

Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալիդ յանձն արասցուք :

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք :

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում . ասասցուք ամենեքեան միաբանութեամբ :

Տէր ողորմ . Տէր ող . մայր սուրբ բարեխօսեա առ Տէր վասն մեր :



Սուրբ Աստուած որ ծնար և յայտնեցար :

Շարական . խորհուրդ մեծ (երեք տուն) տես 33 երես :

Օրթի . Աւետարան , Քանդի Բազումք :

Շարական . Այսօր ցնձան (երեք տուն) :

Օրթի . Աւետարան եւ յամսեանն :

Շարական . Այսօր բանն ի հօրէ (երեք տուն) :

Օրթի . Աւետարան , Յարուցեալ :

Շարական . Ի հօրէ ծագեցար (չորս տուն) :

Օրթի . Աւետարան , Եւ եղեւ ընդ աւուրսն :

Սաղմոս ի Վայելչութիւն ձայնի . (տես 8 երես) :

Օրթի . Աւետարան , Գիրք Ծննդեան Յիսուսի Քրիստոսի : Թէ ի Կիւրակէի հանդիպի նորաստեղծեալ և թէ յայլում աւուր ըստ աւուր զարարչական և զկնի ծածկեալ խորհուրդն ծանուցաւ :



Կիր. Նորաստեղծեալ բանն յանէից  
 ի սկզբանէ զերկինս երկնից, և զերկ-  
 նային զօրս անմարմնոց իմանալեացըն  
 զուարթնոց, և զգալի տարերց քառից  
 հակառակաց միաբանից. որով յաւէտ  
 փառաբանի երրորդութիւնն անճա-  
 ուելի :

Երեքսրբեան մի տէրութիւն միով  
 բնութեամբ աստուածութիւն, լոյսն  
 որ անեղ արարչական ասաց լինել լոյս  
 եղական. զոր եւ ծագեաց յօրն  
 առաջին միաշաբաթ կիւրակէին, որով :

Բաբունօրէն բացատրեսցուք,  
 զժածկեալ խորհուրդընծանիցուք. զի  
 լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց  
 տեսանելի. ի սոյն ծագեաց միաշաբաթ  
 մեզ յարութեան սուրբ ճառագայթ.  
 եկայք փրկեալք ընդ զուարթնոյն  
 սուք օրհնութիւն յարուցելոյն :

Սէրըդ սիրով խոնարհեցար ի փր-  
 կութիւն մեր մարմնացար. նովին  
 մարմնովըն խաչեցար ի գերեզման  
 մահու եգար. այսօր յարեար աստ-

ուածարար, ի հրեշտակաց քարոզե-  
 ցար. եկայք փրկեալք :

Երեւեցար խնկաբերիցն յողջոյն  
 կենացն ուրախալից, եւ ի լերինըն  
 Քալիլեա առաքելոց մետասանից. ար-  
 ժանացո՛ զմեզ ընդ նոսին զքեզ տե-  
 սանել յօրըն վերջին. եկայք փրկ :

Միօնի որդիք զարթիք, հարսին  
 լոյսոյ սուք աւետիք. եթէ փեսայն  
 քո յարուցեալ յաղթեաց մահու իչ-  
 խանութեամբ. գայ պսակէ ըզքեզ  
 փառօք, եւ ընդ առաջ պճնեալ զար-  
 դուք, երգեա՛ երգ նոր յարուցելոյն,  
 ննջեցելոց կենաց պտղոյն :



Բշ. Արարչական բանին հրաման ի  
 յերկրորդումն աւուր սկըզբան, ըզ-  
 ջուրսն ի ջուրցըն բաժանեաց, հաս-  
 տատութեամբ պարունակեաց, որով  
 զաշխարհս հողեղինաց անջրպետեաց  
 ի հրեղինաց. ընդ նոսին որդիք լուսոյ  
 սուք օրհնութիւն երրեակ լուսոյն :



Բազմաչեայ հոյլք քրովբէից երեք-  
սրբեանըդ սրովբէից . աթուք անեղ  
աստուածութեանըն համագոյ երրոր-  
դութեանն . բարեխօս լերուք առ  
Տէր վասն մանկանց եկեղեցւոյ . ընդ  
նոսին որդիք լու :

Գերագոյն իշխանութիւնք եւ ան-  
փոփոխ միշտ տէրութիւնք . անյաղ-  
թելի սուրբ զօրութիւնք ի յԱրարչին  
փառատրութիւն , աղաչեցէք զՏէրն  
ողորմած անտես չառնել զգործս ձե-  
ռաց . ընդ նոսին որ :

Իսպ անմարմնոցըն պետութեանց  
հրեշտակապետք բարձրութեանց ,  
հոգիք հրեղէնք եւ սպասաւորք  
հրեշտակաց զինուորութիւնք . մաղ-  
թեցէք զՏէրըն Տէրանց վասըն մարդ-  
կան երկրաւորաց . ընդ նոսին որ :

Երկնաւորաց դասուց վերնոց օրհ-  
նաբանից քոց զուարթնոց . քաղցրաս-  
ցին առ քեզ գթած որ վասն մեր  
ձայն մաղթանաց . զորս և տայցես մեզ

պահապան յայսմհետէ մինչ ի վախ-  
ճան . ընդ նոսին :

Զօրութեանց եւ տէրութեանց .  
իշխանութեանց և պետութեանց , և  
ամենայն անուանելոց , որ ի յերկինս  
պաղատանօք . ընկալ Քրիստոս ուրա-  
խութեամբ զմեզ յօր մահու եւ յա-  
րութեան . ընդ նոսին օրհնել հոգւով  
զքեզ ընդ Հօր փառատրելով :

Իշ. Էական բանն որ ընդ Հօր ա-  
րարչակից եւ համագօր , յերրորդ ա-  
ւուր զՂուրսըն զատոյց ըզբոյսս և ըզ-  
տունկըս բղխեցոյց . իսկ ի յերրորդ  
դարուն դարձեալ զՂուրցըն հեղեղ  
ցամաքեցոյց . զՆոյ տապանաւն իւր  
ապրեցոյց , ըզկենդանեաց սեռս աճե-  
ցոյց . տուք օրհնութիւն անձառ լու-  
սոյն Հօր եւ Արդւոյ և սուրբ հոգւոյն :

Ընդ ծառոց երկրի զգալեաց տրնկ-  
եաց եւ զտունկս իմանալեաց . զհե-  
ղեղ մեղացըն ցածուցեալ զգասս ար-

դարոց բազմացուցեալ. յորոց և մեծն  
ի ծնունդս կանանց միջնորդ շնորհաց  
և օրինաց. սուք օրհնէք :

Թագաւորին երկնից զինուոր ար-  
քայութեանն աւետաւոր. խնդրեա՛  
ղընել ելս ի սրտի առ ի հովտէս  
տրամականէ. յուխտեալ տեղին տէ-  
րունական ի խոստացեալն որդւոց  
մարդկան սուք օրհնութիւն ան :

Ժառանգին հօր ըսպասաւոր և  
յարգանդէ երկրպագող, Կարապետ և  
Մկրտիչ այնմ՝ որ մեղաց մերոց քա-  
ւիչ, լեր բարեխօս առ նոյն գթած  
ջնջել ըզգիր մեր յանցանաց սուք :

Ի Հօրէ լոյս ծագեցար մեռեալ  
բնութեանս կենդանարար. առաքե-  
ցեր յառաջընթաց սուրբ զՅովհաննէս  
քարոզ կենաց. սորին հայցմամբ ամե-  
նակալ ըզպաղատանրս մեր ընկալ.  
սուք :

Լուսաշաւիղ յերկինս ելին հողա-  
նիւթեայ սուրբ հրեշտակին, արժա-  
նացո ըզմեզ նորին նեղ և անձուկ

ճանապարհին. զի հետեւող գոլով  
նորին Հօր քոյ վերին օթեւանին. և  
երգեսցուք ընդ երջանկացն որդւոց  
լուսոյ քեզ երգս փառաց :

Իշ. Խաւարն անգոյ և սկզբնածին  
հալածեցաւ յօրն առաջին. լոյսն այն  
պայծառ յօր չորրորդին յարեգական  
նիւթ հաւաքեալ. լուսինն ի տիպ  
լուսոյ ստեղծեալ և աստեղաց պարք  
յօրինեալ. որով օրհնի ստեղծողն էից  
ի բանաւոր պաշտօնէից :

Ծածկեալ խորհուրդըն ծանուցաւ  
չորրորդ դարուն Իսահակաւ. ի չոր-  
րորդ օր դարձեալ հրեշտակն ետ զա-  
ւետիսըն կուսական. թէ լոյսն որ ոչ  
բովանդակի, ի քէն մարմնով պարու-  
նակի. յօր օրհնեցայք ազգ :

Կուսին նախնւոց մօրն Եւայի, յոր-  
մէ Ադամըն հին պարտի, բարձան  
անէծքըն տրամական քո սուրբ ծը-  
նընդեամբ կոյս Մարիամ. ազաչեա

զքո միածինն թողուլ ըզմեզս որդւոց նոցին . յոր օրհնեցայք ազգ երկ :

Հարան ընծայեալ յերկրէ յերկինս , յոր համբառնամք առ քեզ հոգիս , յոր լսելոյ քո զաւետիս խնդրեա լինել մեզ լսելիս . զձայն աւետեաց քո միածնին եթէ եկայք օրհնեալք հօր իմ . յոր օրհնեցայք ազգ :

Ձայնիւ առ քեզ Տէր պաղատիմք և առաջի քո անկանիմք . աղաչանօք Աստուածածնին շիջոյ ի մէնջ ըզբոց հնոցին . տուր արտասուօք զմեզրս ջնջել և վերստին զմեզ նորոգել . յոր օրհն :

Ղեկավար ճարտարապետ անցեր ընդ ծովս կենցաղս անհետ . վերաբերեա ընդ Պետրոսի ըզմեզ ի յալեաց մեղաց ծովէս . պաղատանօք գերագունին անապական քում ծընողին . յոր օրհն :



Եւ ճառագայթեալ բանն ի Հօրէ յոր հինգերրորդըն հրամայէ , բղխել ի ջրոց սեռք կայտառաց և թեւաւորս օղականաց , իսկ ի դարուն հինգ մկրտին յամայն և ի ծովն Իսրայէլ հին . տացուք հրաշից ներգործողին պատիւ եւ փառս անեղ բանին :

Մաքրապէս օրինակի առաքելոցըն Քրիստոսի , որք ի ծովէն Տիբերական ի յերկնայինսըն կոչեցան . անցին ընդ ծով աշխարհական և ի հոգին մկրտեցան . տացուք հրաշից .

Յուրախութիւնան անգրաւական ի հարսանիսն անապական . զձեզ առաքեաց հայրըն փառաց . հրաւիրատուք տրտմականաց . սուրբ հարսանեացն այն հայցեցէք ընդ ձեզ լինել մեզ պարակից . տացուք հրաշից :

Նորոգողք տիեզերաց ի նախահօրըն յանցանաց . նորափետուր զարդարեցիք զեկեղեցիս հեթանոսաց . պաղատեցէք առ նոյն գթած զմեզ նո :

րոգել ի հնոց մեղաց . տացուք հրաշից ներս :

Շինող էիցրս համայնից արարածոց ի յանգոյից . նոյն շինեցեր զեկեղեցի վէմդ ի վերայ վիմին բանի . ընդ եղեալ հիմունս ի նոր Սիօն ըզմեզ յօդեա շինմամբ ի նոյն . տացուք :

Ուրախացաւ գնացիւք գետոց քաղաք ի քէն շինեալ Յիսուս . յորմէ վըտակք շնորհաց հօսեն զոգիս մարդկան առողանեն . արբո և զմեզ ի ջրոյն կենաց հայցմամբ հոգւոյն մատրուակաց . զի բանաւոր երկիրըս քո պտղաբերի ի փառըս քո :

Ուր . Զըհանգուրժեալ բնութեամբ բարւոյն ունել միայն զանձառ բարին . այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին ի վեցերորդն առաւօտին . և ի յերրորդ ժամ զկողածինն ի յօգնութիւն ետ հողածինն . զորս ի դրախտին եղ վայելելի բայց ի պտղոյն մահու արգել :

Պապանձեալ առ դատողին յետ յանցանաց Ադամըն հին , զկինըն պաաձառ եղեալ խաբման և կինըն զօձըն դաւաձան . որով երկիրս այս անիծաւ , փուշ և տատասկ ի սմա բուսաւ . վճիռ մահու մարդոյն տուաւ դառնալ ի հող ուստի ստեղծաւ :

Չնչել փութայր հայրըն փառաց ըզգիր պարտեաց մեր յանցանաց . որով զգեցաւ որդին գթած ի վեց դարուն զմարմին մեղաց . հօր հաճութեամբ ի մահ խաչին եկն կամաւ ի յուրբաթին . գառն զենաւ ի հին պատկին փոխան գառանցն օրինակին :

Ռահիւ լուսոյ պատուիրանին արդարութեան ճանապարհին . բարձրանալով քո ի խաչին բարձրացուցեր զմեզ ի յերկինս . քո անպատում խոնարհութեամբդ եւ կամաւոր խաչելութեամբդ հաշտեա ընդ մեզ Տէր գըթութեամբ և թող ըզմեզս ողորմութեամբ :

Սոսկալիդ սերովբէից եւ ահա

ւորը քրովբէից . խոնարհեցար ի չարչարանս չարչարելի բնութեամբ մարդկան ի խաչին զմեղս ըսպաներ և զգատակնիք մահու լուծեր . հաշտ :

Վեհագոյն բնութեանց էից և արարիչդ բոլորից . յորժամ ծագես զխաչիդ նըչան ի գալըստեան քո միւսանգամ . զերկրպագուս այժմ հաւատով լուսաւորեա նորին լուսով . զի համաձայն խաչազգեցիցն ըզքեզ օրհնեմք յաւիտենից :

Շաք. Տէրն յետ ստեղծման արարածոց հանգեաւ յեօթն օրն ի գործոց . այն որ հանգիստ աշխատելոց և կամքն գործ է եղելոց . ուստի և մեզ յոյս հաստատուն ետ հանգստեամբն շաբաթուն . թէ աստ գործել զգործս Աստուծոյ , անդ է հանգչիլ ընդ Աստուծոյ :

Բաբունաբար վարդապետիմք , յօրինակէ Տեառն խրատիմք . որ ի

յերկրորդ արարչութեանն յետ կատարման տնօրէնութեանն . յեօթնէրորդ օր հանգստեան իջեալ մարմնով ի գերեզման . ըզկապեալ հոգիսն վերածեաց զանանց հանգիստն պատրաստեաց :

Յօդդ որ ի քոյդ կողէ ցողեալ բժըշկեսցէ ըզ հանգուցեալն . իջցէ ի հող մահու նոցին և բուսուցէ յօրն վերջին . կենդանարար ձայնիւ ըզքո կոչեա զնոսա ի կեանքս քո . և դասեցո ընդ արդարոցն երգել քեզ փառս ընդ զըւարթնոցն :

Իւրծեալ զբնութիւնս կենաց ունող , դարձոյց յանցանքն ի մահու հող . իսկ անմահիդ մեռելութիւն շնորհեաց դարձեալ զանմահութիւն . զորս են ընդ քեզ թաղեալ մահուամբ աւազանին մըկրտութեամբ , յարո ընդ քեզ քոյին փառօք արեգական նըման լուսով :

Փայլին արդարքն յարքայութեանն եւ ձգնաւորքն ի հանգստեանն . մար-

տիրութիւնն պըսակինն և կուսանաց լապտերք վառին. դասեցո Տէր ընդ նոսին որք զքեզ Աստուած խոստովանին, արդարութեամբ մի դատեսցին, այլ գըթութեամբ քո քաւեսցին :

Քո անպատում խոնարհութեամբդ որ թաղեցար մեռելութեամբ, և յարուցեր յորդուոց մարդկան որք հաւատով ի քեզ անկան, յարո՛ և զմեզ արդարութեամբ և զնրնջեցեալսն ողորմութեամբ, զի կենդանեացրս բերանով տացին քեզ փառս ընդ Հօր Հոգևով :



Քարող, Խնդրեսցուք հաւատով ի տեառնէ :  
Կեցո՛ Տէր :

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա :  
Աղօթք. Քում՝ ամենազօր և հրաշալի ծննդեանդ և յայտնութեանդ Բրիստոս Աստուած մեր :

Օրհնեալ Տէր մեր. Հայր մեր :  
Եւ սկսանի զսուրբ Պատարագ :

Ժամամուտ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի ուր քերովբէքն բազմաչեայք և աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանապականումն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, և ծնար որպէս ըզմարդ զԱստուածն բոլորից զմարմնացեալն առ ի քէն զանձառ զբանն ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց :

Փոխ. Մեծացուցէ անձն իմ զՏէր. Եւ ցընձացէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով. փառք հօր. Այժմ և միշտ :

Գձ. Սուրբ դաստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք : Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ փրկիչն ի սրբոյ կուսէն : Ասէ

ուրախ լեր բերկրեալդ . քանզի տէր  
տէրանց է ընդ քեզ :

Սուրբ Աստուած որ ծնար և յայտնեցար :  
Կիրի. Քանզի երեւեցաւ :

Ալէ. Ալէ. Այսօր ծնաւ որ ի Հօրէ յա-  
ռաջ քան զյաւիտեանս որդին , որ է օծեալ  
Տէր ի քաղաքի Դաւթի , ի վայելչութիւն  
սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարու-  
եակ ծնայ զքեզ :

Աւետարան. Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն  
էր այսպէս :

Սրբասացութիւն բաղմութիւնք (տես 12  
երես) :

Իսկ զկնի Ս. Պատարագին .

Շար. Դձ. Լոյս ի լուսոյ ի Հօրէ ա-  
ռաքեցար և մարմնացար ի սուրբ Կու-  
սէն . զի վերըստին նորոգեսցես զա-  
պականեալն Ադամ :

Իու Աստուած ի յերկրի երեւե-  
ցար և ընդ մարդկան շրջեցար , և  
փրկեցեր ըզտիեզերս յանիծիցն Ա-  
դամայ :

Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քոյ  
ձայն , ասէ դա է իմ Որդի . և սուրբ  
Հօգին զքեզ յայտնեաց աղաւնակերպ  
երեւմամբ :

Սաղմոս . Չայն Տեառն եւ ընթեռնուցուն  
զգրեալն գրքին . զկնի գրքոցն .

Ալէ. ալէ . Ուրախ լիցին երկինք և ցըն-  
ծասցէ երկիր . զուարճասցի ծով լրիւ իւրով,  
տիեզերք և ամենայն որ ի նոսա :

Ալէլուիա օրթի .

Աւետարան . Յաւուրան յայնոսիկ :

Եւ սարկաւազն ասէ զբարոզն զոր կայ ի  
գրքոյն . վասն ի վերուստ խաղաղութեան :

Եւ ընթերցցին զաղօթս Սրբոյն Բարսղի  
Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ :

Չկնի դպիրքն քաղցր ձայնիւ ասասցեն զմեծ  
քարոզն .

Յամենայն ժամ օրհնեմք զօրհ-  
նեալ փրկիչդ Էմմանուէլ , ծնար ի  
կուսէ , եւ վերըստին ծննդեամբ մը-  
կրրտեցար ի Յորդանան ի Յովհաննէ ,

նորին բարեխօսութեամբ ընկալ զազաչանս քոց պաշտօնէից, աղաչեմք:

Լուր Տէր եւ ողորմեա:

Որ սրբեցէր զՉուրան Յորդանանու սրբբնդ աշխարհի, տալով զկնիք նորոգման որդւոց Սիօնի. աուր մաքրութիւն սուրբ Եկեղեցւոյ և ազատութիւն քում ժողովրդեան. աղաչեմք:

Հեղցես Տէր ի մեզ ըզչնորհս հոգւոյդ, զոր ընկալար անօրէնութեամբ ի Յորդանան, զհսգի իմաստութեան, գիտութեան եւ զօրութեան, զհոգի հանձարոյ և խորհրդոյ աստուածպաշտութեան, լցս՛ զմեզ հոգւով երկիւղի քոյ. աղաչեմք:

Անճն կոչեցար իւղ թափեալ և իւղով հոգւոյն օծեալ կնքեցար, և հայրական ձայնիւ յերկնից սիրելի որդի Հօր վկայեցար, շնորհեա՛ յորդեգրութիւն ծնելոցս ժամանել փառաց որդւոյդ Աստուծոյ. աղաչեմք:

Նորագործ տաճար կազմեցեր

զՅորդանան քան զարփին բարձրագոյն. որով ցուցար ստեղծիչ աշխարհի և ամենայն երկնից գերագոյն. արա՛ զմեզ լինել տաճար ամենասուրբ Երրորդութեանդ. աղաչեմք:

Նիւթեղէ՛ն մարմնովդ առ ի մէնջ ի Յովհաննէ եղեր ձեռնադրեալ. և զձուլեալ մարմինդ հրոյ աստուածութեանդ ջրով այսօր մխեցեր. ամրացս՛ զմարմին քո սուրբ զեկեղեցի ի գրանց դժոխոց լինել անվանելի. աղաչեմք:

Ի փորձութիւն մտեր յանապատին ընդդէմ փորձողին. եւ մերով բնութեամբս յաղթեցեր հակառակողին յերիս տեսակս մարտին. կարողացս՛ զհոգի, զմիտս և զմարմին լինել յաղթող ի փորձանս չարասիրին. աղաչեմք:

Սաւառնացեալ հրեշտակք անմարմինք մատեան պաշտել զքեզ յանապատին, որք են բանակք Աստուծոյդ և բանակեալ շուրջ զաթոռովդ պարէին, զնոսա տո՛ւր մեզ պահա-



պան ի յերս և ի մուտս ընդդէմ բա-  
նակաց խաւարին . աղաչեմք :

Ի հաղբից թշնամւոյն պարսպեալ  
ամբացո՛ սուրբ զեկեղեցի , և յանուն  
քո ժողովելոցս շնորհեա՛ զքաւու-  
թիւն և զթողութիւն միաձին որդի  
Աստուծոյ , յիշեա՛ զհոգիս ննջեցելոց  
մերոց և այց արա ի քում գալստ-  
եանդ . աղաչեմք :

Յիշեա Տէր եւ ողորմեա :

Եւ եւս առաւել՛ զյորդորումն սի-  
րոյ և զգործս բարեաց պարգեւել  
մեզ խնդրեմք :

Տուր մեզ Տէր Աստուած :

Բամեա՛ զցրուեալսն ի մի միաբա-  
նութիւն յուսոյ , հաւատոյ և սիրոյ ,  
ի հնազանդութիւն քոյոց աստուա-  
ծայնոց պատուիրանաց , ի վայելո՛ւմն  
երկնայնոց հայրականաց քոյոց օթե-  
ւանաց . աղաչեմք :

Լուր Տէր և ողորմեա :

Գոչմա՛ մք Տիրուհւոյ իսկապէս Մօր  
քոյ և կուսի Մարիամու Աստուա-

ծածնի , և հուպ եղելոյ քեզ հողա-  
նիւթ հրեշտակին ի Յորդանան այսօր  
զքեզ ձեռնադրողին , կրկին բացողին  
զերկինս սրբոյն Ստեփաննոսի նախա-  
վրկային . եւ հօրն մերոյ սրբոյն Գրի-  
գորի Լուսաւորչին , և ամենայն սրբ-  
բոց քոց Տէր որք յաւիտենից քեզ  
հաճոյացան . աղաչեմք :

Տէր ողոր . Տէր ողոր : Յիշեա Տէր  
և ողորմեա :

երգ

Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտ-  
նեալ :

Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ .  
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ ,  
Չառնոյր Կարապետն զմկրտելն ի յանձն .  
Յորդանան լուեալ փախստական դառնայր ,  
Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր :  
Գետ մի՛ զարհուրիր , քո արարիչն եմ ես .  
Եկեալ մրկըրտիմ եւ լուանամ ըզմեզս :  
Յիսուս յառաջեաց Աստուածութեամբն ի  
Չուրն .

Հանգերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ :  
Երկինք պատառեալ ձայն ի յերկնից իջեալ ,  
Չայն Հօր ի բարձանց Որդւոյն իւր վրկայ-  
եալ :

Սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպ տեսեամբ .  
Յայտնեալ ցուցանէր Հօր փառակից գործքին :



Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ  
հաճոյական սիրեցելոյ որդւոյ վկայ . այ  
յորդորէ , գետ յորդորէ , գետ Յորդանան :  
Աւետաւոր ձայնիւ երգէր մեծ կարապետն  
Յովհաննէս :



Ձկնի . Ամէն ալելուիա ալելուիա ալելուիա :  
Օրհնեսցի և Սրբեսցի շուրս այս նշանաւ  
Սուրբ խաչիւ և Սուրբ մեռոնաւ և Սուրբ Աւե-  
տարանաւ : (Երիցս)

Շար. Դձ. Առաքելոյ աղաւնւոյ իջա-  
նելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց  
ինմանութիւն լուսոյ փայլման հրա-  
զինեաց անկիղելի զաշակերտան . մինչ-  
դեռ նրստէին ի սուրբ վերնատանն :

Աննիւթական աղաւնի անքննելի օր  
քննէ ըզխորս Աստուծոյ , զոր առեալ  
ի հօրէ պատմէ զահաւոր և զմիւս-  
անգամ գալուստդ . զոր քարոզեցին  
համագոյական : Օրհնութիւն ի բար-  
ձուհա , ելողին ի հօրէ հոգւոյն սրբ-  
բոյ , որով առաքեալքն արբեցան ան-  
մահական բաժակաւն , և հրաւիրե-  
ցին զերկիրս ի յերկինս :

Քարոզ . Սուրբ խաչիւ :  
Աղօթք . Պահպանիչ :  
Հայր մեր որ յերկինս ես :  
Եւ արասցեն նախատօնակ Յովհաննու Մը-  
կրտչին .  
Ասելով շարական ալ . Սրեգականն արդա-  
րութեան :  
Եւ ի կատարիլ նախատօնակին Քրիստոսի  
Աստուած մեր վասն սուրբ խաչի :  
Տուր մեզ Տէր :  
Քարոզ Սուրբ ճգնաւորօքն :  
Աղօթք . որ ընտրեցիր և ընկալար :



Կ Ա Ն Ո Ն

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽՈՐԴ ԵՐԵԿՈՅԻ

Խոնարհեցո : Ապրեցո :

Ալէլուիա . Ալէլուիա :

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի , հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս : Եկեալքս ի մշտանել արեգականն , տեսաք ըզլոյս երեկոյիս : Օրհնեմք ըզհայր և զորդի և ըզսուրբ հոգիդ Աստուծոյ : Եւ ամենեքեան ասեմք ամէն : Արժանաւորեա ըզմեզ յամենայն ժամ , օրհնել ձայնիւ երգով զանունն փառաց ամենասուրբ երրորդութեանդ : Որ տայ զկենդանութիւնն վասն որոյ և աշխարհըս զքեզ փառաւորէ :

Մեսեդի . Օրհնեալ եկեալ անուամբ տեառն . օրհնեալ որ գալոց ես :

Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ :

Ուղիղ եղիցին աղօթք իմ . որպէս խունկ առաջի քո տէր . համբարձումն ձեռաց իմոց . պատարագ երեկոյի :

Քարոզ ասացուք :

Սուրբ Աստուած որ եկիր և գալոց ես ողորմեա մեզ (երիցս) զկնի :

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի մատո զաղաչանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ :

Աղօթք . փրկել զմեզ ի փորձութենէ :

Քարոզ . վասն լսելի լինելոյ :

Հմբ. ան. Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան բանդ , այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս , վասն փրկութեան հեթանոսաց :

Որ յանարուեստ աթոռ նըստիս բարեբանեալդ ի հրեշտակաց այսօր ի

Միմէօնի բառնալոյ ի գիրկս. որ ըն-  
ծայեսցես զմեզ ի կեանսըդ յաւիտե-  
նից :

Փառք հօր և որդւոյ. Այժմ և միշտ.

Որ արձակիչդ ես կապելոց պար-  
գեւատու ամենեցուն. այսօր հայց-  
մամբ ծերունւոյն արձակեա և զիս  
զբաղմամեղս ի կապանաց մահու ի  
կեանսըդ յաւիտենից :

Քարոզ. Վասն խաղաղութեան.

Աղօթք. Հայր գթած :

Ձկնի նախատօնակ .

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք .  
Օրհնութիւն և փառք հօր :

Օրհ. Դձ. Այսօր անբսկզբնական ծը-  
նունդ հայրական ծոցոյ. բանն եկա-  
ւորեալ ի տաճարն ընծայէ զարարածս  
հօր ի յերկինս . Այսօր բարձեալ եղև  
ի գիրկիս ծերունւոյն, որ բանիւ զա-  
րարածքս բարձեալ ունի օրհնաբա-  
նեսցուք : Այսօր և մեք հաւատաց-  
եալքս ընդ ծերունւոյն Միմէօնի . ըզ-  
բանն համագոյ հօր եւ սուրբ հոգ-

ւոյն օրհնաբանեսցուք : Այսօր ի տա-  
ճարն եկեալ կենարարն և ի գիրկսըն  
Միմէօնի գգուեցաւ . զոր խնդու-  
թեամբ ընկալաւ Երուսաղէմ : Այսօր  
երկիրս երկինք անուանեցաւ . զի  
տէրըն տէրանց իջեալ յերկնից ի յեր-  
կիր . և ընծայիլ յանձն առնու ի գոր-  
ծոց ձեռաց իւրոց : Այսօր հեթանո-  
սաց լոյս ծագեցաւ Քրիստոս Աստը-  
ւած , և փառք իւրում ժողովրդեանն  
Իսրայէլի :

Հրց. Դձ. Օրհնեմք ըզքեզ որ առա-  
քեցար ի հօրէ , անձառելի բանդ  
Աստուած յանձն առեր մարմնանալ  
ի սրբոյ կուսէն . Աստըւած հարցըն  
մերոց : Այսօր եկիր ի տաճարն ան-  
հասանելի փրկիչ . և ի գիրկսըն Միմէ-  
օնի գգուեցար . Աստըւած : Ուստի և  
Միմէօն հոգեւոր հնչմամբ աղաղակէր .  
արդ արձակես ըզձառայս քո տէր ըստ  
բանի քում ի խաղաղութիւն . Աս-  
տըւած :

Գ. Ըզտէր օրհնեցէք և բարձր ա-  
րարէք ըզնա յաւիտեան : Օրհնեցէք :

Ըզմնեալն յամենասուրբ յորովայնէ  
յանարատ ի կուսէն օրհնե : Օրհնեսցէ :  
Ջեկեալն այսօր ի տաճարն , զընկալ-  
եալն ի գիրկսն Սիմէօնի . օրհնե :

Սեծ. Աթոռ քրովբէական երեւեալ  
այսօր Սիմէօն . զԱստուածորդին ի  
գիրկս իւր բարձեալ մարմնով . զոր  
զօրք երկնից ի բարձունս հանապազ  
մեծացուցանեն : Հոգւովըն գոչէր ցըն-  
ծայր արեօքրն ծերունին ասելով . սա  
է թագաւորն անմահ , զոր զօր : Ար-  
տասուելով աղերսէր , արձակեա զիս  
ի խաղաղութիւն , անարատ ծընողի  
քոյ բարեխօսութեամբ . զոր :

Ող. Որոյ առեալ հրաման ի սուրբ  
հոգւոյն , ոչ տեսանել ըզմահ մինչեւ  
տեսցէ զօծեալդ , տէր աղօթիւք ծե-  
րոյն ողորմեա : Որոյ ընկալեալ ի գիրկս  
իւր զօծեալդ , և հայցէր ի կենացդ  
ըզմահ . և արձակիլ ի խաղաղութիւն .  
տէր : Յորոյ այսօր ի գիրկսն զգուե-  
ցար . և կատարեցեր զփափաքումն  
ընծայելոյ քոյ ի տաճարին . տէր աղօ-  
թիւք ծերոյն ող :

Տէր. Զոր փառաբանեն ի բարձունս  
իմանալի զօրութիւնքն այսօր ի տա-  
ճարն եկիր յընծայումն Քրիստոս , որ  
ընծայես զարարածս բարձրելոյ քում  
հօր : Ի գիրկս մարմնով բարձեալ  
եղեր ի ծերունւոյն , որ բանիւ զարա-  
րածս բարձեալ ունիս Քրիստոս , որ  
փան մեր մարմնացար ի սրբոյ կուսէն :  
Վասն որոյ և մեք ընդ Սիմէօնի գո-  
չեսցուք , որ ի հօրէ լուսոյ լոյս ծա-  
գեցար մեզ և կեանք . փառք զալրատ-  
եան քոյ տէր :

Գիրք եւ ապա Սաղմոս

Ալէլուիա ալէլուիա . օրհնեալ որ զալոց ես  
յանուն տեան և օրհնեցար զբեզ ի տանէ  
Տեառն :

Ալէլուիա օրթի . Աւետարան՝ ապա անդաստան

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչես-  
ցուք : Վասն ի վերուստ խաղաղութեան և  
փրկութեան անձանց մերոց զՏէր աղա-  
չեսցուք : Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր  
լստ մեծի ողորմութեան քում . ասացուք  
ամենեքեան միաբանութեամբ :

Յետ Անդաստանին՝ Տաղ

Քրիստոս փառաց թագաւորն, այսօր  
եկեալ յընծայումն. կատարելով նա զօրէնս  
քառասնօրեայ գայտեամբն: Զոր մարգարէն  
Եսայի յառաջագոյն զուշակեաց, յերուսա-  
ղէմ քաղաքի Սիմէօնի ծերունւոյն:

Ի գիրկս առեալ ծերունին զԱստուա-  
ծորդին և ասէ.

Մեծ աւետիս է այսօր Նահապետաց ամենից.  
Մեծ աւետիս է այսօր Մարգարէից ամենից.  
Մեծ աւետիս է այսօր Առաքելոց ամենից.  
Մեծ աւետիս է այսօր Քահանայից ամենից.  
Մեծ աւետիս է այսօր Ժողովրդոց ամենից.  
Այլ մեծագոյն աւետիս Քրիստոնէիցս հա-  
մայնից:

Քարոզ. Խնդրեսցուք:

Կեցո՞՞ Տէր:

Տէր ողորմեա Տէր ողորմեա Տէր ողորմեա:

ՅԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒ  
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ  
№ 149

1875 - 1876

1875

